# ԱՌԵԼԻ ԳԻՇԵՐ

Մռայլ գիշեր է, դարե՛ր, տարիներ
Դշխում հայկական աշխարհի վրայ.
Անարգ իսլամի լուսինն է շրջում
Դժբախտ աշխարհի հայութեան վրայ...

Հայը իր աւեր արնաներկ երկրում
Արիւն արցունք է քամում իր աչքից.
Նա բազկատարած զուլթ է աղերսում
Ժանտ արիւնարբու գազան իսլամից...

Աւերա՛կ աշխարհ... Օ՜, հայ մարտիրոս...
Արեհոս կրծքիդ տխո՛ւր հառաչանք
Չէ՛ լսում ան զուլթ մարդը բարբարոս...
Հառաչանքիդ էլ չի՛ք այլ արձագանք...

Մռայլ գիշեր է այն աւեր երկրում
Որտեղ ցերեկն է արնալից գիշեր.
Որտեղ արեւը խաւար է շրջում,
Որտեղ ծխում են յաւէտ հայ սրտեր...

Օ՜, հայո՛ց աշխարհ, հրդեհուա՛ծ երկիր...
Կրակէ լեզուներ լիզում են երկինք
Քու մէջը ընկած այրւում վշտալիր
Քո անոյշ երկիր դարձել է դժոխք...

Թշուա՛ռ բաբելոն... իսլամի երկիր...
Ուրտեղ հայն է զսպուած ժայռերին,
Որտեղ սոսկալի՛ իշխում է գիշեր
Որտեղ ծրծւում է հայ կրծքի արիւն...

Օ՜, հայ մարտիրոս... վիրաւոր կրծքով
Ուզում ես ապրել... օգնութիւ՛ն կանչում...
Սակայն աղերսդ խեղճ հեկեկալով
Ժանտ սեւ ժայռերի կրծքին փշրրւում...

Աշխարհը քա՛ր է, ողջ տիեզերքը
Անարդարութեան վերայ յաղթ կանգնած...
Օ՜, հայ ժողովուրդ, քո արիւն վէրքը
Չէ՛ բուժում քրիստոնեայ աշխարհը փքուած...

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ